Սահակ Վարդապետ Նահատակեալն 'ի Զամախի, և թաղեալ 'ի Քաղքանջ գիւղն գաւառին տես յիւրում տեղւոջ։ «Ցակոբ Ե. կաթուղիկոս Զամախեցի և այլք բազումք։ Գրիգոր Զղթայակիր Պատրիարքն Երուսաղեմի ։ և այլն. և այլն։

Զատ յարմար է, և Հայ ազգի համար գիտութեան արժանի Արձագանք Զարաթաթերթի № 15. 1894. Փետրուարի. 6. գրուած առաջնորդող յօդուածը՝ մեր վանքերի անցեալ և ներկայ դրութեան մասին, և շատ իրաւացի և կարևոր գրուած որ է հետևեալն։

«ՎԱՆՔԵՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ»

,,Ողջոյն Ձեզ, Հաւք և եղբաւք վանական ուխտին, որ պահապան հրեշտակք էք մնացեալ նշխարաց վանօրէից, որք յաւերժական պարծանաց յիշատակ մեր նախնի կրօնաւոր և գրասէր Ս. Հաւց,,. (Հայրիկ. Անդրանիկ Կոնդակ, ողջոյն 10)։

,,Միջին դարերում, երբ մեր երկիրն արիւնհեղութիւնների ասպարէզ էր, քաղաքները կործանուած աւերակների կոյտեր, իշխանները խաղալիկ բարբարոսների ձեռքին.- գիրը, գրականութիւնը, ուսումն ու գիտութիւնը, մի խօսքով քաղաքակրթութիւնը ապաստարան էր գտել վանքերի պարսպի (հաւեր) մէջ։

,, Ինչով այսօր հայութիւնը պարծենում է, վանքերն են պահել և աւանդել մեզ, գրականութիւն, պատմութիւն եւայլն։

,, Մի ժամանակ ամեն մի Հայ նահանգ հարիւրաւոր վանքեր ունէր, որոնք մի մի ամրոցներ ունէին գիւղացիների համար։ Մի մի դպրոց մանուկների, մի մի համալսարան Հայ ասուածաբանների համար։

,, Տաններեք և տասնուչորս երորդ դարերում կախուլիկ քարոզչութեան դէմ այդ վանքերն են մաքառել, և երբ